
ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻՆ ՈՒ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱԳԻՏՈՒԹՅԱՆՆ
ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Մեծանուն աշուղ Մայաթ-Նովան (Հարություն Մայադյան, 1722–1795 թթ.), միջնադարյան հայ աշխարհիկ տաղերգության լուսաշող դեմքերից է, մեկն այն բացառիկ արվեստագետներից, որոնց ստեղծագործությունները, ձուլվելով ժողովրդի էությանը (այն էլ ոչ մեկ ժողովրդի), հավերժանում են նրա հետ՝ դուրս գալով ժամանակի ու ազգայինի սահմաններից:

Արդեն մեկուկես դարից ավելի պատմություն ունեցող սայաթնովագիտությունը սկզբնավորվել է զինվորական բժիշկ, ականավոր հայագետ ու աշուղագետ Գևորգ Ախվերդյանի կազմած «Մայաթ-Նովա՝ հայերեն խաղեր» ժողովածուով (Մոսկվա, 1852): Վերծանելով, ուսումնասիրելով տաղանդավոր աշուղի ձեռագիր դավթարում եղած շուրջ 40 հայերեն խաղերը՝ Ախվերդյանը որոշ ճշգրտումներ է արել դրանց ստեղծման մոտավոր ժամանակի և հանգամանքների վերաբերյալ՝ այդ տեղեկությունները ներկայացնելով ծանոթագրություններում: Ժողովածուի առաջաբանում էլ նա կենսագրական տեղեկություններ է տալիս Մայաթ-Նովայի մասին՝ կարծիք հայտնելով, թե վերջինս, հավանաբար, ծնված պետք է լինի 1712 թվականին¹: Հետագա այլ ուսումնասիրողների չի հաջողվել ճշգրտել մեծ քնարերգուի ծննդյան տարեթիվը (Լևոն Մելիքսեթ-Բեկ, Գեորգի Լեոնիձե)²: Եվ, առհասարակ, իր գոյության ողջ ժամանակամիջոցում սայաթնովագիտությունն ընթացել է, փաստորեն, ձեռագրագիտական-հրատարակչական, գրականագիտական ու երաժշտագիտական վերլուծության ճանապարհով: Վերլուծվել, մեկնաբանվել են մեծանուն աշուղի ստեղծագործությունները, վերծանվել դրանց կցված հայերեն ու վրացերեն ծանոթագրությունները, և այնտեղից քաղված տեղեկությունների հիման վրա էլ ներկայացվել է կենսագրությունը: Հրատարակված ժողովածուների առաջաբաններում կամ առանձին հոդվածներում համադրելով եղած տվյալները և

¹ Մայեթ-Նովա. Հայերեն խաղեր, լուս գրած աշխատասիրութենով Գևորգայ Ախվերդեան, Մոսկվա, 1852, Յառաջաբան, էջ Է:

² Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Մայաթ-Նովայի մասին.– ՊԲՀ, 1963, № 3, էջ 20–24:

եզրակացություններ անելով՝ ուսումնասիրողները դրանք չեն համեմատել այլ աղբյուրներում հիշատակվող փաստերի ու տեղեկությունների հետ (քաղաքապետար, թերևս, Մոռուս Հասարթյանի և Պարույր Սևակի): Ըստ տարբեր ուսումնասիրողների՝ Մայթ-Նովան ծնված պետք է լիներ 1712 կամ 1717 թվին, 1722-ին կամ 1724-ին: Մենք համակարծիք ենք Պ. Սևակի հետ, որն իր աշխատության մեջ շատ հանգամանորեն հիմնավորում է, թե Մայթ-Նովայի ծննդյան տարեթիվը պետք է 1722-ը համարել³: Այս համոզմանն է նաև մեկ այլ ուսումնասիրող՝ Հենրիկ Բախչինյանը⁴: Մակայն ծննդյան տարեթվի ճշգրտումն ավելի կարևոր չենք համարում, քան ստեղծագործությունները, քանզի Մայթ-Նովան հավերժական մի սիրահար է, նրա երգերն էլ հավերժ երիտասարդ են ու կյանքով լեցուն: Նարեկացու սրբազան ու հրաշագործ մատյանից հետո մեր միջնադարյան քնարերգության մեջ հենց Մայթ-Նովայի ստեղծագործությունն է, որ ոչ միայն հայ, այլև համաշխարհային սիրերգության գանձերից է՝ սիրված ու հոգեհարազատ ամենքին: Ուստի կարծում ենք, միանգամայն իրավացի էր ռուս ականավոր գրող, հրապարակախոս ու թարգմանիչ Վալերի Բրյուսովը, երբ նրան «Արևելքի Պետրարկա» էր անվանում⁵:

Նախ մի քանի խոսքով անդրադառնանք ձեռագիր այն դավթարին, որը մեզ է հասել մեծահռչակ աշուղից ու սրբազան մասունքի պես պահպանվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում⁶: Հենց այդ ձեռագիր տետրն է, որ շատ բան գիտե և շատ բան կարող է պատմել իր տաղանդաշատ հեղինակի մասին: Այն կազմված է 140 էջից (հավանաբար, էջերն ավելի շատ են եղել, բայց թերթերից մի քանիսը պոկվել ու չեն պահպանվել): Դավթարում գրառված են հայատառ և վրացատառ, թուրքերեն ու վրացատառ հայերեն (102 էջից) խաղեր: Դավթարն սկսվում է թուրքերեն «Դեղի լարքի Շախաթայի չուղուլարամ հախ մադաթ. [«Ասացին, թե Շախաթայի, յիս կանչում իմ հախ մադաթ (օգնիր տեր)»] սկսվածքով խաղից (այս և մյուս թարգմանություններն ըստ Մ. Հասարթյանի)⁷, որին կցված է հայերեն հետևյալ

³ Պ. Սևակ. Մայթ-Նովա, Երևան, 1969, էջ 13–19 և 115–116:

⁴ Մայթ-Նովա. Հայերեն խաղեր (կազմ. և առաջաբանի հեղ. Հ. Բախչինյան), Երևան, 1984, էջ 139, Հ. Բախչինյան. Մայթ-Նովա. Կյանքը և գործը, Երևան, 1988 էջ 37–38:

⁵ Մայթ-Նովան Վ. Յու. Բրյուսովի թարգմանությամբ, կազմ. Լ. Մկրտչյան, Երևան, 1963, էջ 38–39:

⁶ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, հիմնական ֆ., ձեռագիր -64 (Մայթ-Նովայի ֆ. № 1):

⁷ Մայթ-Նովա. Հայերեն, վրացերեն և աղբյուրներն խաղերի ժողովածու (կազմ., ծանոթագր. և առաջաբանի հեղ. Մ. Հասարթյան), Երևան, 1959, էջ 145:

ծանոթագրությունը. «Էս դիվանին Արութինի ասած է»: Նման ծանոթագրություններ այլ խաղերի էլ են կցված, որոնք փաստում են, թե հեղինակը հայ է, անունն էլ Հարություն, թեև ստեղծագործել է երեք լեզուներով՝ հայերեն, վրացերեն և թուրքերեն: Այստեղ թուրքերենը հատուկ ընդգծում ենք, քանի որ խորհրդային տարիներին այն կարծիքն էր ընդունված, թե Սայաթ-Նովան հորինել է ադրբեջաներեն խաղեր, և մեր տիրահոշակ հարևաններին դա շատ էր ոգևորում: Նույնիսկ ադրբեջանցի աշուղագետներ էլ հանդես եկան, որոնք «վերծանում» և «ուսումնասիրում» էին բազմատաղանդ աշուղի ստեղծագործությունները: Սակայն այժմ վստահաբար կարող ենք պնդել, որ Սայաթ-Նովան չգիտեր ոչ մի Ադրբեջանի ու ադրբեջաներենի մասին և չէր էլ կարող իմանալ, քանզի այն ժամանակներում ոչ այդպիսի պետություն կար, ոչ էլ այդպիսի լեզու: Նա թուրքերեն խաղեր է հորինել Մծխեթի թուրքերի բարբառով:

Դավթարը կազմված է դիվանի՝ ձեռագիր տաղարանի սկզբունքով, և խաղերը դասավորված են ոչ թե ըստ ժամանակագրության, այլ ըստ ոճական ու թեմատիկ առանձնահատկությունների: Գուցե այդ պատճառով էլ, աշուղների շրջանում ընդունված կարգի համաձայն, գրաված են նախ թուրքերեն (մինչև 101 էջը), ապա հայերեն խաղերը: Դավթարում, ըստ հերթականության, առաջին հայերեն խաղը «Շատ սիրուն իս Շախաթայի ասողին՝ խար չիս անի» սկզբնատողով գազել-դիվանին է, որն այսպիսի ծանոթագրություն ունի. «Էս դիվանի խիստ լավն է, ու վոր սովրի ողորմի ասե: Հիմի գուզիմ, թե հայեվար ասիմ: Ամեն աստված, յիս մղորսու վուրթի Արութինս, պստուց ինչոր յարսուն տարին գլուխ դրի ամենան խաղին, ամա Սուրբ Կարապետի կարողութենով սովրեցա քամանչեն ու չոնգուրն ու (տ)ամբուրեն»: Այս ծանոթագրությունից տեղեկանում ենք, որ Սայաթ-Նովա-Արութինի հայրը մահտեսի էր, ուստի և շատ հարգված պետք է լիներ շրջապատի քրիստոնյաների կողմից: Սայաթ-Նովան, փաստորեն, ընդունված կարգի համաձայն, ուխտի էր գնացել Մշո Ս. Կարապետ վանքը՝ աշուղական շնորհ ստանալու, սովորել քամանչա և սազ (չոնգուր) նվագել⁸: Բայց մեզ հետաքրքրող ամենակարևոր փաստն այն է, որ հայերեն երգեր սկսել է հորինել երեսուն տարեկանից: Ըստ թվագրության (ոչ բոլոր խաղերն են թվագրված)՝ հայերեն ամենահին խաղը «Բլբուլի հիդ լաց իս էլի ...» սկսվածքով խաղն է՝ հորինված վրաց քրոնիկոնի 440-ին, որը համապատասխանում է Գրիգորյան (Հուլյան) օրացույցի 1752-ին: Այդ թվից էլ հանելով 30 տարի՝ Պ. Սևակը հիմնավորում է, որ Սայաթ-Նովան

⁸ Մշո Ս. Կարապետ վանքն աշուղների հովանավորն էր համարվում, և շատ աշուղներ այնտեղ ուխտի էին գնում՝ աշուղական շնորհ ստանալու:

ծնվել է 1722 թ.⁹: Իսկ Ախվերդյանը թուրքիմացաբար այդ 30 տարին հանում է ոչ թե ամենահին հայերեն, այլ ընդհանրապես ամենահին թվագրությամբ խաղի տարեթվից (թուրքերեն մի խաղ է՝ վրաց քրոնիկոնի 430 թվագրությամբ, այսինքն՝ 1742 թ., որից հանելով 30՝ Ախվերդյանն ստացել է 1712 թ.):

Տարակարծություններ են եղել նաև Սայաթ-Նովայի ծննդավայրի ու կրթության հարցերի վերաբերյալ: Մ. Հասրաթյանը չի բացառում, որ նա կարող էր ծնված լինել Սանահինում և հենց Սանահինի վանքում էլ ուսանել էր պատանության տարիներին, իսկ հետագայում ընտանիքով Վրաստան են տեղափոխվել¹⁰: Թե որքանով է հիմնավոր այս ենթադրությունը, դժվար է ասել: Բայց դավթարի խաղերից մի քանիսը հեղինակի մասին կենսագրական որոշ տեղեկություններ մեզ, այնուամենայնիվ, տալիս են: Թեկուզ հենց 1750 թ. գրված «Փառք արարչին, գոյ անողին» թուրքերեն «Ջավասթյամա»՝ Ինքնակենսագրական¹¹ խաղը, որին Հասրաթյանը և Սևակը նույնպես անդրադարձել են: Այստեղ աշուղը պարզորոշ տեղեկացնում է, թե 12 տարեկանից արհեստ է սովորել, մի երկու տարում հասել հաջողությունների, իսկ 15 տարեկանից «ընկերացել գիր-դալամին»: Թե ուր աշուղին է աշակերտել, երբևիցե է մահտեսի Կարապետի և Մառայի որդի Արութինը հանդես եկել արդեն Սայաթ-Նովա աշուղական պատվանունով, ստույգ հայտնի չէ: Միայն Մ. Հասրաթյանը ենթադրում է, թե այդ պատվանունը ծագած պետք է լինի կամ պարսկերեն «Սեյադ ննասի» (երգի որսորդ) կամ էլ թուրքերեն «Սայադ ննվա» կամ «Սայադ նովա» (Սայադի թոռ) բառակապակցություններից¹²: Գուցեն իրավացի է, քանզի աշուղի ազգանունը Մայադյան էր: Աշուղագետ Գարեգին Լևոնյանն էլ ենթադրում է, թե Սայաթ-Նովան աշակերտած պետք է լինի աշուղ Դոստիին¹³, որի մասին ոչինչ հայտնի չէ մեզ, միայն անունն է հիշատակված դավթարի «Յիս մե դարիք բլբուլի պես ...» սկսվածքով խաղին կից ծանոթագրության մեջ («Էս խաղն ովոր սովրի՝ Դոստիի խաղի ձենով ասե, թե վուր չիմանաս, հարցրու, թե գոզալար յրդնաղինա բաղ դաստա բեդաստա թարվանուր»):

Թեև սրանք սոսկ ենթադրություններ են, սակայն աշուղի՝ վերը հիշատակված ինքնակենսագրական թուրքերեն խաղի հետևյալ տողը՝ «Քսան տարուց էշխի ընկած, լալ կծախեմ սովդաքարին...», վկայում է, որ արդեն որպես վարպետ աշուղ (ըստ որում՝ սիրահարված-էշխի ըն-

⁹ Պ. Սևակ. նշվ. աշխ., էջ 14–15:

¹⁰ Մայաթ-Նովա. Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու (կազմ., ծանոթագր. և առաջաբանի հեղ. Մ. Հասրաթյան), էջ 300–302:

¹¹ Նույն տեղում, էջ 302–303, Պ. Սևակ. նշվ. աշխ., էջ 19:

¹² Նույն տեղում, էջ 303:

¹³ Տե՛ս Գ. Լևոնյան. Հայ աշուղներ, Ալեքսանդրապոլ, 1892, էջ 16–18:

կած) հանրության առջև Սայաթ-Նովան հանդես էր գալիս 20 տարեկանից:

Տաղերգուի անձնական կյանքից մեզ քիչ բան է հայտնի: Իր «Սայաթ Նովայի հետ» հոդվածաշարում Նիկոլ Աղբալյանը գրում է (աշուղի պատվանունը նա առանց գծիկի էր գրում – Տ. Ս.), որ Սայաթ-Նովայի կինը թաղված էր Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը (վախճանվել է 1770 թ.), և նրա շիրիմը ուխտատեղի էր թե՛ հայ, թե՛ վրացի կանանց համար¹⁴: Բսկ ժառանգներից հիշատակվում է երկու որդիների ու թոռան մասին: Հենց նրա որդի Օհանի և թոռան՝ Մովսես ավագ քահանա Սայաթնյանի շնորհիվ էլ պահպանվել է դավթարը, ուսումնասիրության համար տրամադրվել Ախվերդյանին ու մեզ հասել:

Իր խաղերով Թիֆլիսում հռչակված Սայաթ-Նովան 1740-ականների սկզբին պալատ է հրավիրվել՝ ծառայելու իբրև արքունական երգիչ-աշուղ: Դա, անշուշտ, մեծ պատիվ էր նրա համար, սակայն ականատես լինելով պալատական ներքին խարդավանքներին՝ ազնիվ ու ճշմարտասեր աշուղը հիասթափություն է ապրում, նրա ստեղծագործություններում առավել հնչեղ է դառնում սոցիալական բողոքի թեման:

Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում, թե էս ո՞վ ա.

Յարովըտ մեկ մրհլամ չունիս, էնդուր գուլաս, Սայաթ-Նովա ...¹⁵

Այս տողերն ասես սոցիալական անարդարությունների մասին ժողովրդի ընդհանրական պատկերացումների բյուրեղացումն են, և հենց այսպիսի տողերի շնորհիվ «խալխի նոքար» Սայաթ-Նովան դարձավ արդարամտության ու մարդասիրության խորհրդանիշ, ընկալվեց որպես ժողովրդի արդար բողոքի արտահայտիչ: Բայց հենց նման տողերի համար էլ պալատական միջավայրը չհանդուրժեց սաղանդավոր աշուղի ներկայությունը, և նա ժամանակավորապես հեռացվեց պալատից: Սակայն 1750-ականների կեսերից Սայաթ-Նովան կրկին պալատում էր և ստեղծագործական բուռն վերելքի մեջ: Հենց այդ ժամանակից էլ, փաստորեն, նաև հայերեն երգեր էր հորինում, որոնց մեծ մասը սիրային բնույթի էին՝ նվիրված վրաց արքայադուստր, իշխանուհի Աննային (հիշենք թեկուզ «Յիս կանչում իմ լալանին ...» սկզբնատողով երգ-գաղտնագիրը): Այս Աննան, որը Հերակլ արքայի քույրն էր և մեծահարուստ ազդեցիկ իշխան Դեմետրե Օրբելյանիի կինը, հայտնի էր ոչ միայն իր գեղեցկությամբ, այլև մշակույթի նկատմամբ իր մեծ սիրով, բարեպաշտությամբ ու բարեգործություններով: Սայաթ-Նովան, հավա-

¹⁴ Ն. Աղբալյան. Երկերի ամբողջական ժողովածու, հ. 2, Բեյրութ, 1966, էջ 18–20:

¹⁵ Սայաթ-Նովա. Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, էջ 61:

նաբար, երբեմն հյուրընկալվում էր նրա մոտ (գուցե այն ժամանակ, երբ ամուսինը առևտրական գործերով բացակայում էր երկրից): Թերևս, - հենց այդպիսի հյուրընկալումներից մեկի առիթով էլ ստեղծվել է վրացերեն այս հիասքանչ խաղը.

Հենց իմացար սոված էի, լի սեղանի համա էկա.
Քիզիդ խոսիլ էի ուզում՝ մոտըտ դամի համա էկա,
Ասի, քիզիդ լուսացնիմ, ուրախ ժամի համա էկա.
Մոռացիլ իմ... լավ միտս չէ, թե ի՞նչ բանի համա էկա ...¹⁶

Սերն էր Սայաթ-Նովայի կյանքի իմաստը, ու նրա ստեղծագործության հիմնական թեման ճշմարիտ սիրո գովերգությունն էր: Այս իմաստով նա, հիրավի, աշուղ էր (սիրահար, սիրո երգիչ)՝ բառի ուղղակի նշանակությամբ:

Ինքնին հասկանալի է, որ Սայաթ-Նովայի խաղերն ուսումնասիրում ենք ոչ միայն կենսագրական տեղեկություններ ճշգրտելու նպատակով: Այդ երգերն առաջին հերթին հետաքրքրություն են ներկայացնում որպես ուշ միջնադարի հայ երաժշտաբանաստեղծական արվեստի յուրօրինակ նմուշներ: Այդ տեսանկյունից, հիրավի, անգուգական երգահյուս քնարերգու է Սայաթ-Նովան: Շքեղ ու գունագեղ պատկերներով, ողջ Արևելքի համար ընդհանուր դարձած արտահայտչաձևերով մեծ աշուղը հիասքանչ խաղեր է հյուսել՝ դրանցում արտահայտելով իր անկեղծ զգացմունքները, ուրախ և տխուր տրամադրությունները, իր պատկերացումները կյանքի ու աշխարհի, մարդու և մարդկային հույզերի, հատկապես մաքուր ու անկեղծ սիրո և հավատարմության վերաբերյալ: Ահա այսպես.

Յիս էլ ուրիշ յար չիմ սիրի, աշխարումըս դուն իս իմըն.
Թե մե շարաթ քիզ չիմ տեսնի, կու կըտրիմ քամանչի սիմըն.
Թեգուզ թագավուրն կանչե, թեգուզ Լոդմանի հեքիմըն՝
Վո՞ւր մե դարդս կու հասկանան՝ դուգունըս դաղին կարոտ է ...¹⁷

Բայց սոցիալական անարդարությունների ու անհավասարության պայմաններում, «ոսմիկի ու թավաղի» հակասություններին զուգահեռ անհամատեղելի, անհանդուրժելի էր ազատ սիրո գաղափարը, և 1760-ականների վերջերին Սայաթ-Նովան վերջնականապես վտարվում է պալատից, արտաքսվում Պարսկաստանի հեռավոր Էնզելի քաղաք՝ որպես վանական աղոթելու և չգործած մեղքերի համար ապաշխարե-

¹⁶ Նույն տեղում, էջ 112:

¹⁷ Նույն տեղում, էջ 45:

լու: Կնոջ մահից հետո՝ 1770-ին, նա տեղափոխվում է Հաղպատի վանք, ձեռնադրվում ավագ քահանա: Հենց այստեղ էլ ավագ քահանա Տեր Ստեփանոս-Սայաթ-Նովան արտագրում-ընդօրինակում է ձեռագիր մի Աղոթամատյան, որին կցված է հիշատակարան և Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը¹⁸:

Առեղծվածային են նաև Սայաթ-Նովայի մահվան հանգամանքները: Հավաստի գրավոր աղբյուրներ չկան. միայն Իոնե Բագրատյոն արքայազնի «Կալմաստբա» գրքում անորոշ անդրադարձ կա, թե նա մինչև 1800 թ. ողջ էր¹⁹: Մակայն, ըստ ավանդության, նա զոհվել է 1795 թ. պարսից Աղա Մահմեդ խանի՝ Թիֆլիս կատարած արշավանքի ժամանակ, երբ Հաղպատից եկել էր հարազատներին ավելի անվտանգ վայր տեղափոխելու և գտնվում էր Ս. Գևորգ վանքում²⁰: Ավանդության համաձայն՝ հենց այդ եկեղեցու պարիսպների մոտ էլ թաղված է նա, և 1914 թ. այդ վայրում Հովհ. Թումանյանի ու նկարիչ Գ. Բաշինջաղյանի նախաձեռնությամբ հուշարձան կանգնեցվեց: Ամեն տարի այնտեղ նշվում է Սայաթ-Նովայի հիշատակի օրը՝ Վարդատունը, որին մասնակցում են սայաթնովյան երգի բազմաթիվ սիրահարներ:

Սայաթ-Նովայի ստեղծագործությունը շրջադարձային էր թե՛ հայ, թե՛ վրաց մշակույթի պատմության մեջ: Իր երգերով նա նոր էջ բացեց երկու ժողովուրդների երաժշտաբանաստեղծական արվեստում՝ իրար միահյուսելով արևելյան կենսազգացողությունն ու քրիստոնեական-մարդասիրական պատկերացումները, սուֆիական խոհափիլիսոփայությունն ու ազատ սիրո վեհ գաղափարը: Ցավոք, մեր ուսումնասիրողները (խոսքն աշուղագետների մասին է – Տ. Ս.) քիչ են անդրադարձել այդ հարցին և առհասարակ վրացահայ աշուղական հին դպրոցին (բացառությամբ, թերևս, Գ. Լևոնյանի)²¹, որի սկզբնավորողներից էր նաև Սայաթ-Նովան: Պարսկահայ աշուղական հին դպրոցի ավանդույթների անմիջական շարունակողը եղավ փոքր-ինչ ուշ ձևավորված վրացահայ հին աշուղական դպրոցը, որը նրանից փոխ առած ձևերին ու ոճերին միահյուսեց վրացահայ ֆոլկլորին բնորոշ տարրեր: Սայաթ-Նովան, Շալչի Մելքոն, Քեչիկ Նովան, Ծատուրը, Բուդաղ օղլանը, Ֆրեյդունը, Դարբեղիարը, Թիվլիզ-Նարգիզը, Ալվան օղլանը, Արուրին Բեգունը և

¹⁸ Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4270, թ. 276բ, 10838: Ձեռագիր աղոթամատյանին կից հիշատակարանում նշված է. «Գրեցաւ ի Կախոյ քարվանսարէն. ով ընթերցող յիշեայ զգծող գրոյ մեղապարտ Ստեփանոս քահանայս, որ Մաւեաղ Նօվայ կոչէն, և հայրն իմ մահտեսի Կարապետն և մայրն իմ Սառայ և դուք յիշեալ լինիք յառաջի Ա՛յ ամէն»:

¹⁹ Լ. Մ է լ ի ք ու է թ - Բ է կ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 7, Երևան, 1955, էջ 246–250:

²⁰ Հ ո Վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 8, Երևան, 1999, էջ 235–238:

²¹ Գ. Լ. և ո ն յ ա ն. Աշուղները և նրանց արվեստը, Երևան, 1944, էջ 36–40:

ուրիշներ եղան այս դպրոցի հիմնադիրները: Ի տարբերություն Նոր Ջուղայի աշուղների՝ վրացահայ աշուղների երգերն առանձնանում են կենսասիրությամբ: Այստեղ ավելի քիչ ենք հանդիպում պանդուխտի դառն ու տխուր վիճակի նկարագրության, բայց առավել հնչեղ է սոցիալական բողոքի թեման, որը նկատում ենք նաև հենց Սայաթ-Նովայի խաղերում: Լեզվաոճական առումով էլ վրացահայ աշուղների երգերը գեղեցիկ են, ունեն տաղաչափական ավելի բարդ կառուցվածք (ինչպես Սայաթ-Նովայի, Շամչի Մելքոյի կամ Քեչիկ Նովայի երգերը): Հասկանալի է, որ վրացահայ աշուղները, սկսած հենց թեկուզ Սայաթ-Նովայից, հայերեն ու թուրքերեն երգերից գատ, վրացերեն երգեր էլ էին հորինում՝ դրանով նպաստելով նաև վրաց երգարվեստի զարգացմանը: Սակայն պետք է նշենք, որ վրացի աշուղներ հանդես չեկան. զարգանալով Վրաստանում, դրսևորվելով նաև վրացերենով՝ աշուղական արվեստը մնաց սոսկ հայկական երևույթ: Բայց այն մասին, որ այն սիրված էր նաև վրացի ժողովրդի կողմից ու վրացերեն երգեր հորինող առաջին աշուղն էլ Սայաթ-Նովան էր, փաստեր կան նաև վրացական աղբյուրներում: Այսպես, Լ. Մելիքսեթ-Քեկն իր աշխատության²² մեջ բերում է Իոնե Բագրատյոն արքայազնի «Կալմաստրա» գրքից այն հատվածը, որտեղ Հաղպատի վանքում իրեն հյուր եկած երիտասարդ վանականին Սայաթ-Նովա-Տեր Ստեփանոսը պատմել է հետևյալը. «Ես լավ սագ (չոնգուր) էի ածում և միաժամանակ պարսկական ձայնի վերածեցի վրացերեն խաղերը: Այդ դեռ ընդունված չէր: Եվ երբ Հերակլ թագավորը մեջլիս սարքեց և մեզ՝ նվագողներին, տարան նրա մոտ, այն ժամանակ էս պարսկական նվագով վրացերեն երգեցի: Արքան (բատոնը) շատ հավանեց և խալաթ պարգևեց ինձ: Հետո ուրիշ շատերն էլ երգեցին և ընդօրինակեցին ինձ»²³:

Բայց վերջապես ո՞րն է սայաթնովյան երգի հարատևության գաղտնիքը, այդ ինչպե՞ս է, որ արդեն 250 տարուց ավելի այդ երգերն ապրում են մեր ժողովրդի հետ՝ ձուլված մարդկանց հոգիներին, պահպանելով իրենց նախնական հմայքը և հետայսու էլ, անշուշտ, կպահպանեն: Թերևս, պատճառն անկեղծությունն է և այն, որ այդ երգերն ոգեղենի ու մարմնավորի ճշմարիտ ներդաշնակումն են: Ուստի, կարծում ենք, միանգամայն տեղին է հիշել Ամենայն Հայոց բանաստեղծի այն միտքը, թե Սայաթ-Նովան «... մողա չի, որ ժամանակի ընթացքում ձանձրացնի ու փոխվի ... Գեղեցիկ ձևի մեջ մի մշտական հուր-հոգի է նա, մի ազնիվ և լիքը սիրտ, մի հարազատ հզոր շունչ, որ մեր աշխարհի հարազատ շնչի նման միշտ խաղալու է Կովկասի ժողովուրդների վրա...»²⁴:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ СЯЯТ - НОВЫ И СЯЯТНОВОВЕДЕНИЯ

ТИГРАН САРКИСЯН

²² Լ. Մելիքսեթ-Քեկնի նշվ. աշխ., էջ 247–250:

²³ Նույն տեղում:

²⁴ Հնվհ. Թնւմանյան. ԵԼԺ, Երևան, 1995, հ. 7, էջ 58:

Резюме

Исследование жизни и творчества великого армянского народного поэта-ашуга Саят-Новы началось в 1852 г., когда впервые в Москве был опубликован сборник его стихов «Саят-Нова – армянские песни». В предисловии составитель этой книги – военный врач, этнограф, филолог-ашуговед Геворг Ахвердян – высказывает предположение, что Саят-Нова родился в 1712 г. Впоследствии другим исследователям не удалось уточнить год рождения поэта. Некоторые из них считают, что он родился в 1712 или 1717 г., другие предполагают, что в 1722 или в 1724 г. П. Севак четко и обоснованно доказывает, что годом рождения Саят-Новы нужно считать 1722 г. Саят-Нова – один из тех исключительных художников слова, песни которого проникли в душу народа (и не одного народа) и вечно будут жить в ней. Творчество Саят-Новы сыграло значительную роль для развития как армянского, так и грузинского музыкально-поэтического искусства. Есть вопросы, на которые исследователи либо не обратили внимание, либо исказили, например, влияние творчества Саят-Новы на старую школу грузино-армянских ашугов.

SOME ISSUES RELATED TO SAYAT-NOVA AND THE STUDY OF HIS WORKS

TIGRAN SARGSYAN

Summary

The review of life and literary works of the great Armenian poet-“ashough” Sayat-Nova began in 1852, when , for the first time, the collection of his works, entitled “Sayat-Nova, Armenian Songs”, was published in Moscow. The collection was prepared for publication by a medical officer, ethnographer, noted Armenologist and poetry expert Gevorg Hakhverdyan, who, in the foreword, expressed the opinion that Sayat-Nova was likely to have been born in 1712. Afterwards other researchers were not able to confirm the exact date of the birth of the “ashough”. Some of them considered that he was born in 1712 or 1717, some others thought that he was born in 1722 or 1724. We are of the same opinion with P. Sevak. who proved clearly and conclusively that 1722 should be considered Sayat-Nova’s year of birth. Sayat-Nova is one of those exceptional artists, whose songs, from early on, melted into not just one, but many people’s souls, and will go on living intertwined forever. Sayat-Nova’s activities played a big role in the formation and development of Armenian, as well as Georgian school of musical poetry, though, these questions have been ignored or distorted by researchers.